

եւ որ իր դազաթնակէտին հասած էր բուն իսկ մեր դարուն մէջ՝ Եւրոպայի հողէն վերջին կայսրութիւններուն ալ ջնջումով: Եւ ինչպէս ամէն դազաթնակէտի՝ այս մէկուն ալ հետեւեցաւ վայրէջքի այն հանգրուանը, որու դեռ հաղիւ սկիզբները կը պտնուէին տասնեակ մը կամ տասնհինգ տարիներէ ի վեր: Անհրաժեշտ եղեր էին արիւնահեղութեան երկար տարիներ, դարեր դրեթէ, որպէսզի արեւմտեան մշակոյթը ձերբազատուէր այն աշխարհահայեացէն՝ որուն համաձայն պէտք էր տիրապետել իշխողին կրօնքը (cujus regio ejus religio): Շարունակեցինք, սակայն, ապրիլ տակաւին ուրիշ սկզբունքով մը՝ զոր հանդիսաբար կրնանք բանաձեւել իբրեւ տիրապետութեան անհրաժեշտութիւնը իշխողի մշակոյթին (cujus regio ejus cultura): Եւ քիչ քան չէ՝ որ փոխելու համար այս հեռանկարները բաւարար եղած ըլլան վաթսնական թուականներուն մշակութային ու կրօնական խմորումները. նաեւ՝ կրօնական. խորհինք միայն այն անցքը որ տեղի ունեցաւ՝ իբրեւ ծիսական լեզու դարերէ ի վեր դահակալող լատիններէն լեզուներու, քարքառներու, դաւառաբարբառներու այն անսահման բազմութեան, որ այսօր Արեւմտեան Եկեղեցւոյ պաշտամունքին մէջ կը փոխանակեն լատիններէնը: Ու չմոռնանք որ պաշտամունքը ըլլալով հանդերձ, ըստ էութեան, կրօնական արտայայտութիւն մը, է միանգամայն մշակոյթի եւ բարքերու ակնառու երեւոյթ մը:

Այս հեռանկարէն դիտուած, կը խորհիմ թէ մեր սիրելի Եոսիկին բազմակողմանիօրէն ճոխ անձնականութիւնը, քոլոր հասկնալի տատանումներով, երերումներով, տարակոյսներով, ետ եւ առաջ ընթացքներով, ու թերեւս ոչ միշտ համընկեցիկ դրսեւորումներով հանդերձ, կը ստանձնէ այսօր՝ աւելի քան երէկ՝ խորհրդանշական իմաստ մը, գրեթէ մարդարէական, պիտի ըսէի, ընկերութեան եւ մշակոյթի նոր իմացումի մը ճամբուն վրայ՝ զոր այսօր կ'ուզենք վառուցանել. ուր՝ անհատին, խումբին, հաւաքականութեան ամէն բաղկարար տարր երբեք ինքզինքը չղղայ իբրեւ մահուան դատապարտուած, այլ տահմանուած վերապրելու՝ հաւասարակշռութեան եւ փոխադարձաբար յրացուցիչ նոր համադրութեան մը մէջ: Ո՛չ թէ ձուլումը՝ որ ամէն ինչ կը կրնայ ու կը հարթէ, այլ համարկումը՝ որ ամէն ինչ կը ներառուցէ եւ կ'արժէքաւորէ, պէտք է ըլլայ բնաբանն ու գաղափարականը այս նոր պրպտումին: Եւ կը խորհիմ թէ Եոսիկի անձնականութիւնը, իբրեւ մշակոյթի մարդ, լուսաւոր հանդերձան մը կը կազմէ այս ճանապարհին վրայ, որ իր ներհակութիւններուն եւ յարակարծութիւններուն տրամասութեամբ իսկ, կը մնայ իբրեւ յարատեւ կանչ մը՝ խորացնելու սկսուած պրպտումը, ընդարձակելու անոր հորիզոնները, յօդաւորելու անոր բաղկարարները:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ – NECROLOGIE

Հ. ՅՈՒՍԻԿ ՎՐԴ. ՊՈՒՇԼԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (1915–1982)

Անակնկալ սուգ մը կրկին հարուածեց Միթարեան Միաբանութիւնը, զգեստնելով այս անգամ մեծ կաղնի մը, ինչպիսին էր Հ. Յոսիկ Վրդ. Պուշլիկեան, հաղիւ 67 տարեկանին, վանքին բազմավաստակ մատակարարը, միաժամանակ հմուտ արեւելագէտ, ծանօթ՝ բազմաթիւ արեւելեան հին լեզուներու եւ մասնագէտ՝ Սուրբ Գրքի:

Միաբանութեան տարեգրութիւններուն համաձայն՝ լուսահոգի Հ. Յոսիկ 16րդ հունգարահայ վարդապետն էր, ծնած՝ 1915, Յունուար 8ին, Փրետէայ (այժմ՝ Ռումանիա, այն ատեն՝ հունգարական Թրանսիլլանիա):

1926, Օգոստոս 1ին վը մտնէ Ս. Ղազար, առաջնորդութեամբ Հ. Աթանաս Վրդ. Տիրոյեանի: Ուսումնական փայլուն ընդունակութիւններով օժտուած՝ 1932ին կ'աւարտէ լիկէոնական ընթացքը եւ 1933, Օգոստոս 20ին ուխտերով կ'անդամակցի Միաբանութեան, Գերպ. Յովհան Աւգեր Աթաբաճի վարչութեան օրով:

Այնուհետեւ վեց տարի կ'ուսանի իմաստասիրութիւն եւ աստուածաբանութիւն, Հռոմի «Ս. Անսելմոս» կաճառին համալսարանական դասընթացքներուն հետեւելով յաջողութեամբ (1933–1939):

1938, Դեկտեմբեր 25ին, Ս. Ղազարի մէջ վը ձեռնադրուի կուսակրօն արեղայ, երկու դասընկերներու հետ (Հ. Աւետիք Վրդ. Թաթիսեան եւ Հ. Արսէն Վրդ. Աղամեան), Գրպ. Սարգիս Արքեպս. Տէր–Աթաբաճեանէն:

1952, Օգոստոս 18ին կ'ընդունի վարդապետական դաւադանի աւագ աստիճանները՝ Գերպ. Ուլուհոճեան Աթաբաճի ձեռքբերէն:

Երիտասարդ միաբան, 1939ին արդէն իրեն կը յանձնուի «Բաղմալէպ»ի խմբագրութեան օգնականի պաշտօնը, միաժամանակ վաբելով վանքի դրատան հայկական բաժինը:

1940ի ամառը զինք կը գտնենք Աղուոյ, Մուրատ-Ռափայէլեանի աշակերտներուն որպէս հսկիչ եւ ուսուցիչ:

Այդ թուականէն առդին Հ. Յուսիկ վարդապետի խնամքին յանձնուած են միշտ տնտեսական ու մատակարարական կամ դործակալական պատասխանատու պաշտօններ՝ Վենետիկ, Փարիզ եւ այլուր: Նախ՝ վանքին մէջ՝ (1940-1943), ապա՝ Մուրատ-Ռափայէլեանի մէջ (Աղուոյ, 1943-1944):

1942ին, իր դասընկերոջ եւ նմանապէս հունկարահայ՝ Հ. Անդրէաս Ծոկոյեանի հետ կ'ապրելէ Հունդարիա եւ Ռումանիա:

1945ին զինք կը գտնենք Հռոմ, ուր երեք տարի կը յաճախէ Յիսուսեան հայրերու Ս. Գրքի համալսարանը, հմտանալով արեւելեան հին լեզուներու (աքքատերէն, հիթիթերէն, եբրայեցերէն, եւլն...) եւ աստուածաշնչական հարցերու: Միաժամանակ՝ ատեն մը կը վարէ Հռոմի Մխիթարեան վանատան դործակալութիւնը:

1948-1949 դարձեալ զինք կը գտնենք Վենետիկ - Ս. Ղազար, տընտեսական պաշտօններով:

1949-1958 կը գործէ Փարիզի Սամուէլ-Մուրատեան վարժարանին մէջ (Սեւրը), որպէս ուսուցիչ եւ հսկիչ, հուսկ նաեւ իբր մատակարար:

1958ի միաբանական ընդհ. ժողովին Հայրերը, զնահատելով Հ. Յուսիկ Վրդ. Պուշիկեանի տնտեսագիտական ձիրքերը եւ անխոնջ նուիրումը, զինք կ'ընտրեն Միաբանութեան ընդհ. մատակարար, պաշտօն՝ զոր անձնուիրարար կը կատարէ մինչեւ 1976, երեք Աբրահայրերու վարչութեան օրով, զարկ տալով Միաբանութեան տնտեսականին, մանաւանդ՝ Միջին-Արեւելքի մէջ:

1976էն առդին առողջական տկար պայմաններով հանդերձ՝ շարունակեց տակաւին աջակցիլ Միաբանութեան, նախ՝ Փարիզ, իսկ վերջին տարիներուն՝ Հռոմ, միշտ մատակարարական ասպարէզին մէջ:

Մտտի տաղնապ, ոտքի երակներու խցում եւ այլ տկարութիւններ, հակառակ քժչկական լաւ դարմանումներու, հետզհետէ հիւժեցին իր առողջ կազմը:

Բժշկական վիրաբուժում մը՝ ոտքի երակներուն խցումը դարմանելու, Մայիսի վերջերը, նոր յոյսերով արծարծեց բոլորս: Անհրաժեշտ էր երկրորդ գործողութիւն մը, Յունիսի սկիզբները, որ յաջող ալ անցաւ: Պուտափեշթէն հասաւ իր կրտսեր եղբայրը՝ Յովսէփ (նախկին սան Մուրատ-Ռափայէլեանի), ամոքելու իր ցաւերը: Հռոմէն հասնող լուրերուն համաձայն՝ ամէն ինչ կը թուէր յուսադրիչ, հիւանդին տրամադրութիւնը՝ բարձր:

Սակայն սրտի նոր տաղնապ մը, Յունիս Գի իրիկունը, վերջնականօրէն խզեց իր կեանքին թելը, Հռոմի Սան Զաքարիոյ հիւանդանոցին մէջ, խոր սուղի մատնելով Միաբանութիւնս համօրէն:

Զօրացած Ս. Եկեղեցւոյ խորհուրդներով եւ ամէնօրեայ հաղորդութեամբ, նոյնիսկ հիւանդանոցին մէջ, Հ. Յուսիկ Վրդ. Պուշիկեան բաժնուեցաւ այս աշխարհէն, խանդավառ երազներով ապագայի, որոնք անշուշտ յաւերժութեան սեմէն պիտի ընկերանան իրեն, երկնքէն բարեխօսելու իր պաշտած Միաբանութեան նորանոր յաջողութիւններուն համար:

Իր սպառիչ ու մտահոգիչ պաշտօններուն առընթեր՝ լուսահոգի Հ. Յուսիկ Վրդ. վայրկեան չէր կորսնցներ զբաղելու իր մասնագիտութիւններով. հմտացած էր քաղմաթիւ հին ու նոր լեզուներու, անընդհատ կը կարդար, գրականէն մինչեւ բանասիրականը, գիտականէն մինչեւ հետախուզականը, դառնալով կենդանի համայնագիտարան մը:

«Բազմալէպ»ի մէջ ունի գրախօսականներ, գրական ընդարձակ ուսումնասիրութիւններ՝ հունգար բանաստեղծ Բէթլեմի Շանտորի մասին (1950), մեր անուանի երգիծարան Երուանդ Օտեսանի մասին (1969-1970), ինչպէս նաեւ Սուրբ-Գրային վերլուծում մը՝ Մխիթար Աբրահայր «Մեկնութիւն Գրոց Ժողովողին» հատորին մասին (1953):

Վերջերս նուիրուած էր հայերէնէ-իտալերէն ընդարձակ բառարանի մը պատրաստութեան:

Յարգանքով կը խոնարհինք Հ. Յուսիկ Վրդ. Պուշիկեանի դպրոցին առջեւ, որ դուրդուրանքով Հռոմէն Վենետիկ բերուեցաւ (Յունիս 12), աղօթքով եւ խոնկով հանգչեցնելու համար Ս. Ղազարի միաբանական գերեզմանոցը, երբեմնի անխոնջ մատակարար ու վաստակաշատ հայրերուն՝ Հ. Մանուէլ Քաջունիի վրա Հ. Թէոդոր Սիրունեաններու կողքին, որոնք նոյնպէս իրենց կեանքերը նուիրած էին՝ նման դժուարին պայմաններու մէջ՝ Միաբանութեանս հաստատութեան եւ պայծառութեան համար:

Այնքան աւելի ծանր կը կշռէ մեր վրայ լուսահոգի Հ. Յուսիկ Վրդ.ի պակասը, որքան տարածած եղաւ իր անդարձ բաժանումը մեզմէ՝ ինչպէս եւ քանի մը տարիներ առաջ նոյնպէս տարածամօրէն կորսնցուցեր էինք իր հոգեկցորդ դասընկեր՝ Հ. Անդրէաս Վրդ. Ծոկոյեանը: Բայց լիայոյս ենք, մեր խորունկ ցաւին մէջ, թէ անոր վաստակէն՝ որպէս ատոք սերմերէ՝ պիտի ծլին վաղուան յոյսերը Միաբանութեան, ամբողջովին նուիրուած՝ հայ, ժողովուրդի լուսաւորութեան սուրբ գործին:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Հ. ՅՈՒՍԻԿ ՎՐԴ. ՊՈՒՇԼԻԿԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Բեքըֆի Շամսոբ (1823 Յունուար 1 - 1849 Յունիս 31), «Բազմ», ձԸ (1950), էջ 76-80, 117-121:

Մեկնութիւն Գրոց Ժողովողին, «Բազմ», ձԺԱ (1953), էջ 25-37:

Երուանդ Օտեան (Ծննդեան 100ամեակին առիթով), «Բազմ», ձԻԷ (1969), էջ 287-296, ձԻԸ (1970), 55-59, 268-275 (անաւարտ):

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Գաղութաւայ տարեգիրք, Ա. տարի, 1939: Խմբւոր. Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան, տպ. Պուքրէշ, «Հայ Մամուլ», 24×16, էջ 290, գինը՝ 120 լէշ - «Բազմ», ՂԸ (1940), էջ 51-52:

Abedik Gróf Csodálatos élete = Jrták: Dr. Kallos Lajos és Dr. Keresházi József = Dr. báró Nyáry Pál tanulmányával = Föváarosi Nyomda RT., 20×13, էջ 120 - «Բազմ», ՂԸ (1940), էջ 204-205:

Ռէն, Որբերը (Վէպ), Պուէնոս Այրէս, տպ. «Արմենիա», 1940, 80 մեծ, էջ 342, գին՝ 4 փետոյ կամ մէկ տոլար - «Բազմ», ձԸ (1950), էջ 94-96:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ LES LIVRES DU JOUR - RECENSIONS

THE INCARNATION

by

LEIF FRIVOLD

A study of the doctrine of the Incarnation in the Armenian Church in the 5th and 6th Centuries according to the Book of Letters, Universitetsforlaget - Oslo 1981, pp. 238.

Գիրք Թղթոցի վաւերաթուղթերէն քաղելով՝ Հեղինակը ուզած է ուսումնասիրել Ե-Ձ դարերու քրիստոնեարանական հարցերը:

Ուսումնասիրութիւնը կարելի է երկու մասերու բաժնել. Ա) Պատմական եւ մշակութային շրջամակը ուսումնասիրող մաս եւ Բ) Իսկական եւ բուն միւրը շօշափող մաս, որ հազիւ 50 էջի կը հասնի (189-215, ծն. 216-226):

Գիրքը կը սկսի Յառաջաբանով մը (էջ 9-10), ուր Հեղինակը ամփոփ կերպով ուսումնասիրութիւնը հարցը կը ներկայացնէ: Գրեաւոր մտահոգութիւնը եղած է Գիրք Թղթոցի պարունակած հիմնական եւ շատ կարեւոր վաւերաթուղթերը թարգմանել եւրոպական լեզուի մը (մեր պարագային՝ անգլերէնի) որպէսզի մասունքի դառնան բանասէր եւ հետաքրքրուող հասարակութեան: Արդարեւ, Քաղկեդոնի Ժողովի ժամանակաշրջանին (451էն ընդ առաջ եւ յետոյ) գրուած նախնիները, մեծ կարեւորութիւն ունին - իբր դիւանական փաստաթուղթ - հասկնալու համար այն աստիճանական աստիճանական վէճերու թէ՛ ծագումը, թէ՛ զարգացումը եւ թէ՛ հետեւանքը:

Ներք, ըլլա՛յ քաղաքական - վարչական, ըլլա՛յ եկեղեցական - կրօնական, հետեւաբար՝ նաեւ մեր ազգային պատմութեան ձեւաւորումին մէջ:

Ինչպէս որ Հայոց պատմութեան առարկայական մէկ մերձեցումը չի կրնար անտեսել մեր Ժողովուրդին ունեցած ընդհանուր հարեւան ազգերու եւ մշակոյթներու հետ եւ անոնց միջեւ փոխադարձ ազդեցութիւնները, այսպէ՛ս ալ - յանուն միեւնոյն առարկայականութեան - չէ կարելի ձուլել եւ լուծել Հայոց պատմութիւնը (քաղաքական կամ եկեղեցական) դրացի կայսրութիւններու պատմութեան մէջ, պարզապէ՛ս՝ որովհետեւ, մեր պարագային, աստուածաբանական միեւնոյն վէճերէն առաջ եկած եւ զարգացած անցուդարձներու դիմաց կը գտնուինք: Եւ գուցէ Հեղինակին տեսութեան թերի կողմը հոս է:

Հարց կը դնէ թէ ինչո՛ւ Հայոց Եկեղեցին միաբնական ուղղութիւն կը բռնէ, աստիճանաբար նաեւ նախնական դիրք մը. քաղաքական, աստուածաբանական կամ ուրիշ ի՞նչ պատճառներու համար Հայ Եկեղեցին բաժնուած է «կայսերական Եկեղեցի»էն (Ամդ, էջ 9):

Անշուշտ «քաղաքական» պատճառները այնքան գերակշիռ դեր չեն ունեցած այս շրջանի պատմութեան մէջ. գերազանցօրէն անպատեւ եւ ան օրերուն անդամ (յիշենք՝ Հայաստանի Երկուքի բաժանումը, եւ անկէ ընդ առաջ՝ Պապ Թագաւորի հալածանքները) եկեղեցական հաղորդակցութեան կապը չէ խլուած «կայսերական» (․․․) Եկեղեցիին հետ:

Ուրեմն «աստուածաբանական» եւ կամ «ուրիշ» պատճառներ հարկ է փնտռել: